№ 99 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 3 **1899** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 3 № 99

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր հոգաբարձութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ժողովրդական թատրոն. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կիրջալի.

ՆՈՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի առևտրական դպրոցի բացումը իրագործութեան շաւղի վրա է։ Դպրոցի կանոնադրութիւնը հաստատվեց և առաջիկայ կիրակի օր, յունիսի 6-ին, պէտք է կատարվի դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնը։ Մենք անհրաժեշտ ենք համարում ընտրողների առանձին ուշադրութիւնը հրաւիրել այդ գործողութեան վրա, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ առաջին հոգաբարձութիւնը պէտք է զբաղվի նոր գործի կազմակերպութեան խնդիրներով և ուստի պէտք է կատարելապէս ձեռնհաս լինի իրան յանձնած գործը աջողութեամբ գլուխ բերելու։ Մանաւանդ այդ կարևոր է և այն պատճառով, որ տեղական համայնքի ներկայացուցչութեան մասնակցութիւնը դպրոցական գործի մէջ, դպրոցական հոգաբարձութիւններ կազմելու սկզբունքը, ինքն ըստ ինքեան մի պատկառելի և համակրելի սկզբունք է, որի օգտակարութիւնը պէտք է արդարացնել նպատակայարմար գործավարութեամբ։

Ֆինանսների մինիստրութիւնը, որի հրամանատարութեան տակ պէտք է գտնվի դպրոցը, միշտ մեծ համակրութեամբ է վերաբերվել հոգաբարձութիւններ հաստատելու գաղափարին, վստահութեամբ հաւատալով, որ տեղական ներկայացուցիչները, իբրև ծանօթ այն պայմաններին, որոնց մէջ պէտք է գործի դպրոցը, կարող են իրանց մասնակցութեամբ նպաստել դպրոցի թէ տնտեսական վիճակի բարւոքման և թէ մասնագիտական պարապմունքների աւելի նպատակայարմար կազմակերպութեան։ Թիֆլիսի առևտրական դպրոցի հոգաբարձութիւնը կազմված պէտք է լինի տասն տնդամից, որոնցից հինգ անդամին և մի նախագահին ընտրում է Թիֆլիսի առևտրական հասարակութիւնը, իսկ մնացածները մասնակցում են իբրև ներկայացուցիչներ՝ մանկավարժական մասից—դպրոցի դիրեկտորը, Ֆինանսների մինիստրութեան կողմից յատուկ անձն, առևտրական դասակարգից—առևտրական աւագը և քաղաքային դումայի կողմից, եթէ սա ցանկանայ, յատուկ լիազօր։

Հասկանալի է, որ հոգաբարձութեան թեկնածուները չը պէտք է շլանան այն մի քանի տրտունջներից, որ պէտք է նրանք վայելեն իբրև հոգաբարձուներ և պէտք է մտնեն այդ պաշտօնի մէջ միայն այն դէպքում, երբ նրանք զգում են, որ կարող են ձեռնհաս լինել այդ նոր և պատասխանատու գործի մէջ։ Բացի ֆինանսական կամ վարչական-տնտեսական հարցերից, ինչպէս մենք ասացինք, հոգաբարձութեանն է վերապահված նաև մասնագիտական պարապմունքների ծրագիրների քննութիւնը։ Այդտեղ պահանջվում են իսկապէս գիտութիւն և գործը ուսումնասիրելու հմտութիւն, որպէս զի նոյն իսկ սկզբից դպրոցական դասաւանդութիւնը ստանայ կարելիին չափ կանոնաւոր կազմակերպութիւն։ Առևտրական հասարակութիւնը իրապէս աջող ընտրութիւն անելով, իրան պատուած և բարձրացրած կը լինի. իսկ եթէ այդտեղ դեր կը կատարեն կեղծ մտափառութիւնը, մուտքիր հաղնելու արտօնութիւնը և ուրիշ անհիմն հաշիւներ, դա վիրաւորական կը լինի ամբողջ դասակարգի համար և վնասակար գործի համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Կարծում ենք, որ արևմտեան հայերը այնպէս չեն հասկանում «հանճար» բառը, ինչպէս մենք ենք հասկանում։ Եւ այդ պատճառով արևմտեան հայերի համար ամեն մի աչքի ընկնող մարդ «հանճար» է։ «Բիւրակն» շաբաթաթերթի մէջ տպված է մի յօդուած ոմն Յովհաննէս էֆէնդի Եաղճեանի մասին։ Առանց զարմանքի չէք կարող կարդալ այս տողերը.

Տխուր և միանգամայն նուիրական պարտականութիւն մը կը ստիպէ զիս կենսագրութիւնը ընել անոր որ ըստ Թլկատինցիի բացատրութեան. «Ո՞վ կը համարձակի անոր վրայ գրիչ շարժել. անոր, որ Աստուած ափեւ-չէր նրանց, բայց պատերազմը առիթ էր ներկայացնում հարստանալու ի հաշիւ տաճիկների, թերևս և մօրդամների, իսկ այդ աչկառա էր նրանց համար։

Ալէքսանդր Իպսիլանտին քաջ մարդ էր, բայց չունէր այն դերի համար հարկաւոր յատկութիւնները, որ ստանձնել էր այնքան ջերմ և այնքան անդգոյշ կերպով։ Նա չէր կարողանում վարվել այն մարդկանց հետ, որոնց ստիպված էր առաջնորդել։ Նրանք ոչ յարգանք էին զգում դէպի նա, ոչ վստահութիւն։ Այն դժբախտ կռուից յետոյ, որի մէջ ընկաւ յոյն երիտասարդութեան ծաղիկ մասը, Կօրդակի Օլիմբիօսին խորհուրդ տուեց նրան հեռանալ և ինքը բռնեց նրա տեղը։ Իպսիլանտին չտապեց դէպի Աւստրիայի սահմանը և այնտեղից իր անէծքն ուղարկեց այն մարդկանց, որոնց անուանում էր ըմբոստ, երկչոտ և սրիկայ։ Այդ երկչոտներն ու սրիկաները մեծ մասամբ կոտորվեցին Սեկուվանքում կամ Պրուտի ափերում, յուսահատօրէն պաշտպանվելով տասնապատիկ զօրեղ թշնամու դէմ։

Կիրջալին գտնվում էր Գէօրգի Կանտակուզինի գնդում, որի (Գէօրգիի) մասին կարելի է կրկնել նոյնը, ինչ որ ասված է Իպսիլանտու մասին։ Սկուլեանի կռուի նախընթաց օրը Կանտակուզինը թոյլատրութիւն խնդրեց ռուս իշխանութիւնից մտնել մեր կարանտինը։ Զօրագունդը մնաց առանց առաջնորդի, բայց Կիրջալին, Սաֆիանօսը, Կանտագօնին և ուրիշ նրանց նմանները առաջնորդի կարիք չէին զգում ամենևին։

Սկուլեանի կռիւը՝ կարծեմ՝ ոչ ոք չէ նկարագրել այնպէս սրտաշարժ կերպով, ինչպէս նա եղել է իրօք։ Երևակայեցէք եօթ հարիւր հոգի արնաուտ, ալբանացի, յոյն, բուլղար և ուրիշ դէսից-դէնից հաւաքած մարդիկ, որոնք ոչ մի գաղափար չունեն պատերազմական արուեստի մասին և նահանջում են տասնմեկ հազար տաճիկ հեծեալ զինուորների առաջ։ Նահանջողները սղմվել են Պրուտի ափին և պատսպարվել են երկու փոքրիկ թնդանօթների յետևում, որ նրանք գտել են Սասսայում, իշխանի բակում, և որոնք մի ժամանակ թնդացնում էին օդը իշխանի տօներին, խնջոյքի միջոցին։ Տաճիկները մեծ ուրախութեամբ կարտէչ կը բռնեցնէին, բայց չէին համարձակում այդ անել առանց ռուս իշխանութեան թոյլատրութեան. կարտէչը անպատճառ կը հասնէր մեր ափը։ Կարանտինի գլխաւորը (այժմ արդէն հանգուցեալ), որ քառասուն տարի ծառայել էր զինուորական ծառայութեան մէջ, ի ծնէ լսած չը կար գնդակների սուլոց. բայց այս անգամ Աստծու կամքն էր, որ լսէր։ Մի քանի գնդակներ սուլելով անցան նրա ականջների մօտով։ Ծերուկը սաստիկ զայրացաւ և գոռգոռաց կարանտինը պահպանող զօրագնդի մայորի վրա։ Մայորը, չիմանալով՝ ինչ անի, վազեց դէպի գետը, որի միւս ափում արշաւում էին դէլիբաշները, և մատով սպառնաց նրանց։ Դէլիբաշները այդ տեսնելով, դարձրին ձիերի գլուխները և յետ քշեցին, իսկ նրանց յետևից հեռացաւ և ամբողջ տաճիկ հեծելազօրքը։ Մատը թափ տուող մայորի ազգանունը Խօրչեվսկի էր։ Չը գիտեմ, ինչ եղաւ նա վերջը։

Սակայն հետևեալ օրը տաճիկները յարձակում գործեցին հէտէրիստների (դաշնակցականների) վրա։ Չը համարձակվելով ոչ կարտէչ բռնեցնել, ոչ ռումբ, նրանք վճռեցին, իրանց սովորութեան հակառակ, կռուել սառը զէնքով։ Կատաղի կռիւ էր։ Իրար կոտորում էին եաթաղանների։ Տաճիկների բանակում աչքի էին ընկնում մինչև այն ժամանակ նրանցում չը տեսնված նիզակներ. ռուսաց նիզակներ էին դրանք. նեկրասովեանները *) կռուում էին նրանց շարքերում։ Դաշնակցականներին, մեր թագաւորի հրամանով, իրաւունք էր տրված անցնել Պրուտը և թաղնվել մեր կարանտինում։ Նրանք սկսեցին անցնել գետը։ Կանտագօնին և Սաֆիանօսը այնքան մնացին տաճկական ափում, մինչև որ իրանց բոլոր ընկերները հասան մեր ափը։ Կիրջալին նախընթաց օրը վերք էր ստացել և արդէն պառկած էր կարանտինում։ Սաֆիանօսին սպանեցին։ Կանտագօնին,

*) Ռուս աղանդաւորներ, որոնք գաղթել էին Թիւրքիա։
Ն. Թ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՐՋԱԼԻ

(ՊՈՒՇԿԻՆԻ 3)

Հեղինակի ծննդեան հարիւրամեակի առթով

Կիրջարին բուլղար էր։ Կիրջալի տաճկերէն կը նշանակի հերոս, կտրիճ։ Իսկական անունը չը գիտեմ։

Կիրջալին իր ասպատակութիւններով սարսափ էր դցել ամբողջ Մօլդավիայում։ Նրա մասին մի թերթ գաղափար տալու համար՝ պատմեմ նրա քաջագործութիւններից մէկը։ Մի գիշեր նա ու Միխայլակի անունով մի արնաուտ երկուսով յարձակվեցին մի բուլղար գիւղի վրա։ Երկու ծայրից գիւղը կրակ տուեցին ու սկսեցին տնէ տուն անցնել։ Կիրջալին կոտորում էր, իսկ Միխայլակին կողոպուտն էր կրում։ Երկուսն էլ գոռում էին՝ Կիրջալի, Կիրջալի։ Ամբողջ գիւղը փախաւ։

Երբ Ալէքսանդր Իպսիլանտին ապստամբութիւն հրատարակեց և սկսեց զօրք ժողովել, Կիրջալին տարաւ նրա մօտ իբ հին ընկերներից մի քանիսին։ Հէտէրիայի (դաշնակցութեան) իսկական նպատակը շատ էլ լաւ յայտնի

Ի՞նչ տկարութիւն և յուսահատութիւն որ պիտի զգար մէկը, երբ ջանար նկարագրել մեծատարած լեռ մը, նոյնը կը զգաս ես, երբ կը ջանամ ըստուերագծել այս անչնչացեալ, բայց յաւէտ անմահ անձին կեանքը։ Իմ խօսքերս և բառերս այս ինքնայայտ հանճարը դրուագելու համար ոչինչ են, եթէ անկէց ալ պակաս չեն։

Այսպիսի վկայութիւն, հաստատվեցէք, կարելի է տալ մի Շէքսպիրի, մի Նապոլէօնի մասին։ Եւ ինչ։ Մինչ Հայութեան մէջ էլ երևան եկած է եղել մարդկային շնորհքի բարձրագոյն մարմնացումը, որի վրա ազգերը ու լեզուները պիտի զարմանան, մինչդեռ մենք, հայերս, առաջին անգամն ենք այդ լսում։ Այդպիսի բան, դժբախտաբար, չը կայ և մենք, գոնէ արևելեան հայերս, որ «հանճարի» մասին ունենք որոշ հասկացողութիւն, այս դէպքում լոկ թիւրիմացութեան զոհ ենք։ Բանից դուրս է գալիս որ այդ «հանճարը» մի ընդունակ, շնորհքով մարդ է եղել և ուրիշ ոչինչ։ Խարբերդի մէջ փաստաբան, երբեմն ուսուցչութիւն արած, թիւրքաց բանաստեղծութեան լաւ ծանօթ, ինքն էլ մի քանի ոտանաւորներ գրած, բոլոր հայերէն և թիւրքերէն գրքերը կարդացած, «Աճէմեանէ, Դուրեանէ, Ալիշանէ շատ շատ կտորներ գոց գիտէր»—ահա այդ մարդու հանճարի յատկանիշները։ Իբրև մարդ, նա ազնիւ է, բարեացակամ։

Իր այս սոսկալի հիւանդութեան ատեն գիշեր մը մէկ ակռան կը սկսի ցաւիլ. կուզեն ակռայ քաշող մը կանչել, բայց ինք կը մերժէ ըսելով։ «Թեղեը քունէն մի հանէք, չըլլայ որ պաղի։ Ակռայիս ցաւը կամաց կամաց թող անցնի»։

Եւ ահա, այդ բոլորի համար կարելի է համարվել գրել հետևեալը.

Իբաւ Յովհաննէս էֆէնդի հանճար մը էր ոտքին մատէն սկսեալ մինչև գլխուն մազին ծայրը, բայց ինքնաշխատութեամբ չինուած հանճար մէր։

Ապա գրողը մեծ տարակուսանքի մէջ է. արդեօք ինքը իր նկարագրութեամբ մի մեծ սրբապղծութիւն չէ՞ կատարում։

Զեմ գիտեր այս մեծ անձնաւորութիւնը նկարագրելու համար ըրած ճիգերս իր արժէքը պիտի չը քիչցնեն, ինչպէս որ արշալոյսը թուղթի վրայ նկարողը անոր գեղեցկութիւնը կը քիչցնէ։ Մեծութիւնները նկարագրել, զանոնք պզտիկցնել է։

Երկուսից մէկը. կամ արևմտեան հայերը «հանճարի» մասին հասկացողութիւն չունեն, կամ փոքր ի շատէ ազնիւ և ընդունակ մարդուն գովելու մէջ այնպիսի չափազանցութիւնների են հասնում, որոնք գուցէ միայն թիւրքական շողոքորթութիւններով տոգորված մի մինոլորդի մէջ չեն այնքան վայրենի, ծիծաղելի երևում։ Մեզ աւելի հաւանական այս վերջին հանգամանքն է թւում։ Մենք չենք ուզում վիրաւորած լինել հանգուցեալ Եաղճեանի յիշատակը. գուցէ նա իսկապէս մի լաւ, բարի մարդ է եղել։ Բայց գրական բարքերի տեսակէտից երևոյթը ինքն ըստ ինքեան շատ տխուր է։ Կ. Պոլսի լրագիրները մի հին, բարի ժամանակ սովորութիւն ունէին իրանց ընթերցողներին աւետել, թէ այս ինչ «էֆէնդիին ազգասէր մանուկ մը ծնաւ»։ Կամ ահագին ներբողներ էին տպագրում այս կամ այն հարսանիքի, նշանադրութեան առիթով, էլ չենք խօսում դամբանականների մասին, որոնք մի ամբողջ բաժին էին կազմում մեր պարբերական հրատարակութիւնների մէջ։ Բայց դա մի հին, բարի ժամանակ էր, որ վաղուց է անցել։ Արևմտեան հայերի ժամուը չէ կարողանում մինչև այժմ էլ ազատվել այդ ներբողական ոճից և շարունակում է շողոքորթութիւնների միջոց դարձնել տպագրական խօսքը։ Պէտք է ասել թէ այդպիսի մամուլը չէ կարող դաստիարակել, առաջ տանել։ Գովելը մեղք չէ, բայց գովել այնպէս, ինչպէս պօլսեցիներն են գովում, կատաբեալ յանցանք է։ Եւ չը գիտենք. եթէ մի հասարակ, բարի և ազնիւ մարդու մասին այսպէս են գրում, ապա ինչ խօսքեր, ինչ գովասանքներ են թողնում այնպիսիների համար, որոնք կարող են իսկապէս մեծ, հանճարեղ լինել։ Այն ժամանակ հօ այլ ևս բառեր չեն լինի, և գրողը գրչով ոչինչ չը կարողանալով անել, երևի, կը պատռէր իր գլուխը և այդ նշանով ցոյց կը տար թէ ինչ է ուզում ասել...

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Անդրկովկասեան երկաթուղու գլխաւոր մեքենայա-գործարանը գտնվում է Թիֆլիսի կայարանի մօտ։ Սրանից 15 տարի առաջ բանուորների թիւը մօտ 800 հոգի կը լինէր, այժմ գործարանը այնքան մեծացել է, որ 2000 հոգուց աւելի մարդ է բանում նրանում, որոնց թւում կան մօտ 200 հոգի հայեր։

Հինգ վեց հոգի բանուորներ, զգալով բանուորական կեանքի անխախանձելի կողմերը, հարց են յարուցանում բանուորների մտաւոր և բարոյական զարգացման մասին և մանաւանդ արթնցողութեան դէմ կռուելու միջոցներ գտնելու մասին, և այդ հարցով դիմում են վարչութեան բժիշկներ Սախարովին և Խուդադովին, խնդրելով օգնել նրանց և աջակցել «Զը խմողների

ընկերութիւն» կազմելու գործի: Բժիշկները սիրով համաձայնվում են և ոչ մի ջանք չեն խնայում գործը գլուխ բերելու: Կազմվում է «Զը խմողների ընկերութիւն Թիֆլիսում»: Երկաթուղու պետական կօնտրօլեօր պ. Սաֆրօնով՝ հմուտ լինելով բեմական գործերի, յանձն է առնում մասնակցել և ընկերութեան ղեկը վարել: Քիչ ժամանակամիջոցում բացվում են գրադարան-ընթերցարան, թէյարան. ամբարները վերածվում են դահլիճների, սենեակների, մի երկար դահլիճի ծայրում կառուցանվում է մի բաւական յարմարաւոր բեմ դաշնամուրով. բանուորներից և ծառայողներից, նրանց կանանցից և աղջիկներից կազմվում են թատրօնական և երգեցիկ կօնցերտական խմբեր, հրաւիրվում են և ուրիշ ոյժեր և սկսվում են փորձեր ու կրկնողութիւններ: Սկզբում շատերը թերահաւատութեամբ են վերաբերվում, բայց առաջին ներկայացումը այնքան գրաւում է, որ գրվում են բազմաթիւ անդամներ և ընկերութիւնը տալիս է պարբերական—սեզօնների ներկայացումներ և համերգներ: Թէ արհեստական և թէ գեղարուեստական ճիւղերում մասնակցում են և բանուորներ: Գործարանի ճախարակագործական բաժնի կառավարիչ պ. Բլիմբերգի ձեռքի տակ գտնվող 300 բանուորներից ընտրված ընդունակ անձնաւորութիւններից կազմված է երաժշտական խումբ, որը ղեկավարութեամբ մի բանուորի, բաւական դժուար կտորներ է նուագում օպերաներից և մասնակցում է գործին: Երկու տարի գոյութիւն ունեցող ընկերութիւնը երէկ սեզօնի վերջին ներկայացումը տուեց Պուշկինեան երեկոյթով:

Պուշկինից կարդացին, երգեցին, խաղացին, օպերայի տեսիլներ ներկայացրին և ապօթէոս պատկերացրին: Ամենից աջող կատարեցին իրանց դերերը Ե. Գ. Սարաջեվա, դէ-Կապրէլովիչ և Կովալենկի: Քառաձայն երգերից մի քանիսը խումբը անսպասելի լաւ երգեց: Ապօթէոս-Պուշկին շրջապատված իր գրուածքների տիպերով—կենդանի պատկերը հիանալի էր: Դահլիճը լիքն էր բանուորներով և նրանց ընտանիքներով: Ահա իսկական ժողովրդական թատրոն:

Ընթերցարանը սիրով յաճախում են, իսկ երեկոները բանուորները գալիս են բուֆէտ-դահլիճը և զուարճանում շախմատ ու այլ անմեղ խաղերով:

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մայիսի 24-ին

Ժամանակակից մարդկանց անտարբերութիւնը դէպի իրանց մերձաւորը և հասարակութիւնը այնքան յուզիչ և տխուր է, որ մարդ ակամայ մտածում է, թէ դրանք անսիրտ են, առանց զգացմունքի, թէ երբէք դրանք չեն տանջվել: Խուլ են մարդիկ: Ամենօրեայ աղաղակները ասում են թէ սովից, հիւանդութիւններից մեռնում են, օգնութիւն հասէք դժբախտ արարածներին, սակայն ոչ մի տեղից մի գդալի օգնութիւն չը կայ: Լուռ է և Բագուի հարուստը. նա ամուր է նստում իր գանձարկղի վրա և զգոյշ կերպով, փէշերով ծածկում է ՆԸՐԱՆ, մարդկանց աչքերից անտեսանելի դարձնելու համար: Բայց մի և նոյն ժամանակ աղի արցունքներ է թափում—թէ նա անբախտ է, նա աղքատ է, նա չէ կարողանում այնպէս հարստանալ, ինչպէս այս ինչ «հաջին» է հարուստ: Եւ իսկոյն խօսքը դարձնում է այն բանին, որ որդիները լաւ չեն, որ ապագայ չունի իր քրտինքով վաստակած գանձը և պիտի անհետանան միլիոնները...

Եւ այդ թշուառ մարդը ճշմարիտ է. նրա զաւակները խայտառակ քաջեր պիտի լինեն և հէնց այժմեանից ցոյց են տալիս իրանց եղջիւրները: Եւ ով է մեղաւոր. հէնց իրանք, այդ պատուական հայրերն ու մայրերը: Այդ բազմագանձ մարդկանց որդիները հազիւ հազ հասնում են գիմնազիայի չորրորդ կամ հինգերորդ դասարանին, էլ անհնար է դառնում նրանց շարունակել ուսումը. նրանք դասերի փոխարէն սովորում են այլ ուսում և այդ այնքան հրապուրիչ և փափուկ է, որ նրանք թողնում են ուսումնարանը, և ահա արդէն պատուական որդին անցել է շուայտ կեանքի փառաւոր կուրսերը, մեծ վարպետ է փող մսխելու մէջ: Էլ ինչ է հարկաւոր. շուտով դրանց գտնում են այդ չկօլայի հին ու աւելի փորձված աշակերտներ և ամենայն ինչ կատարեալ է:

Դէհ, թող հասարակութիւնն էլ ուրախանայ, ահա գայիս է նոր, օգտակար և ցաւակից անդամ: Իսկ պատուական հայրը թող դարսէ իր արիստոկրատ որդու համար այդ թունալից գանձը, որից խնայում է մի չնչին մաս հանել թշուառ մեռնողի համար:

Կարելի է համոզվել, որ այսպէս են միայն Բագուի մարդիկ: Սրանք միայն պաշտում են իրանց անհատական կեանքը և բացի իրանց ընտանիքից և զաւակներից, կեր ու խումից չը կայ այլ աշխարհ. և սրանց լուրջ համոզմունքն է—աղքատը ինչու է ծնվել:

Մեր տաղանդաւոր նկարիչ պ. Բաշինջաղեան իր նկարներից մի քանի հատ բերել է Բագու. ինչպէս երևում է, նա մտադիր է շուտով տեղափոխվել արտասահման աւելի երկար ժամանակով, թէ կատարելագործվելու և թէ պարապելու. ցանկալի է, որ մեր հարուստ Բագունը առանց սակարկութեան գնէր նրա պատկերները, որով միջոց կը տար, Կովկասում, միակ լաւ գեղարուեստագէտին, արտասահմանում հանգիստ հոգով պարապելու առանց նիւթական նեղութեան: Անհրաժեշտ է նրան այդպէս ոգեւորել:

Քաղաքիս ունևոր դասակարգը արդէն կըռունկների երամի պէս չուում է դէպի ամարանոցները, ի հարկէ գլխաւորապէս հանքային ջրեր, որտեղ պիտի վերանորոգեն ձմեռվայ երեկոյթներից դաղրած մարմինները: Այնտեղի սոսկալի թանգ կեանքը և ընակարանների գինը ոչինչ են մեր բագուցիների և նրանց շռայլ ու շահամոլ տիկինների համար:

Ա. Կրասիլնիկեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջևան, մայիսի 27-ին

Առ 4 մայիսի 1899 թվի յօդուտ մեր անմահ բանաստեղծ Րաֆայէլ Պատկանեանի մահարձանի ժողոված մեզ մօտ կար 1692 ր. 25 կ.: Ստացանք Բագուից՝ Ա. Ս. Կրասիլնիկեանից 100 ր., եղբ. Ա. և Ն. Աբէլեաններից՝ 10 ր., Բօստովից՝ պ. Ս. Գուռճեանից՝ 3 ր. և Ս. Անանեանից՝ 20 ր., ընդամենը 133 ր.: Ուրեմն ամբողջ գումարը մեր ժողովը առ 27 մայիսի կը լինի 1825 ր. 25 կոպէկ:

Դարձեալ դիմում ենք մեր սիրելի բանաստեղծի յիշատակը յարգողներին, խնդրելով շտապել ուղարկել մեզ իրանց լումայն՝ Нахичевань на Дону, Григорію Чалхушьяну.

Գր. Զալխուշեան

ՆՆԻՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շուտով Կովկաս կը գայ յայտնի մասնագէտ, պրոֆէսօր Վ. Դօկուչաեվ՝ շարունակելու իր հետազօտութիւնները, որոնք վերաբերում են հողի յատկութեան և կազմութեան: Նա այս անգամ պէտք է այցելի Անդրկովկասի այն մասերը, որոնք մօտ են Պարսկաստանի և Թիւրքիայի սահմաններին և ընկած են Արաքսի ընթացքով: Աշխարհագրական ընկերութեան Կովկասեան բաժինը իր միջոցներից որոշել է յատկացնել պրոֆէսօր Դօկուչաեվի հետազօտութիւնների համար 2000 ռուբլի:

—

Վրաց ազնուականութեան հողային բանկի լիազօրների ժողովը մի համակրելի որոշում է կայացրել—նպատակ ունենալով նպաստել գիւղատնտեսական վիճակագրութեան զարգացման: Ժողովը որոշեց յանձնել 1000 ռուբլի գումար Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհրդին այն նպատակով, որ նա կազմակերպի գիւղատնտեսական տեղեկութիւններ ժողովելու գործը կանոնաւոր և հաստատ հիմքերի վրա:

—

Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար Ի. Սվեչին առաջարկել է Թիֆլիսի քաղաքագլխին, հաղորդել անմիջապէս, թէ ինչ աղբիւրներից է մտադիր քաղաքը Պուշկինի անունով բացվելիք գրադարան-ընթերցարանի և թոշակի ծախքերն անել, և թէ քաղաքի որ մասերը և որ փողոցներն են սալայատակվել այս տարի և ինչ գումար է նրանց վրա ծախսված:

—

Թիֆլիսի քաղաքային դումայն իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ յունիսի 1-ին, որոշեց աւելացնել քաղաքային հիւանդանոցում ծառայող պաշտօնեաների ռոճիկը և յատկացնել առանձին գումար այն բժշկին, որ վերահսկում է դեզինֆէկցիայի վրա, նրա ճանապարհորդութիւնների համար քաղաքի զանազան մասերում:

—

Երկրագործութեան մինիստրի կովկասեան լիազօրը յանձնել էր մասնագէտ Բօլովին հետազօտելու նաւթահորերի և նաւթագործարանների ազդեցութիւնը բուսականութեան վրա: Բօլով, ուսումնասիրելով խնդիրը, եկաւ այն եզրակացութեան, որ նաւթային շրջանում բուսականութիւնը թէև մասամբ վնասվում է թանձրը մուխից, բայց միևնոյն ժամանակ ազատ է մնում վնասակար միջատներից, որոնք չեն դիմանում նաւթի ծխի ազդեցութեան: Այն տեղերում, որտեղ նաւթի ծուխը թանձր չէ, բուսականութիւնը չէ վնասվում:

—

Թիֆլիս է վերադարձել հողաչափների մի խումբ, որ գնացել էր Սղնախի գաւառի տափարակը չափելու համար: Այդ տափարակում, որ այժմ ծառայում է իբրև ձմեռային արօտատեղ, ինչպէս յայտնի է, գտնվել են նաւթի հանքեր: Առաջիկայ ամիսներում հողաչափերը պէտք է պատրաստեն չափած և հետազօտած հողերի պլանը:

—

Դուշէթի գաւառի Ուսոփրիս գիւղից գրում են վրաց «Ցնօբիս-Փուրցելի» լրագրին, որ մայիսի 23-ին եկած սաստիկ կարկտից վնասվել են գիւղի և շրջակայքի բոլոր ցանքսերը և այգիները:

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են, մայիսի 26-ից. «Անցեալ գիշեր սաստիկ քամի բարձրացաւ այստեղ. թէ քաղաքի փողոցների վրա և թէ այգիներում բազմաթիւ ծառեր է կոտրատել քամին. երկիւղ են կրում, որ վնաս չը հասնի և ցորենի հասկերին, որոնք շուտով կը հասունանան: Ի դէպ. հացահատիկների դրութիւնը այս տարի Ղուբայի գաւառում խիստ գոհացուցիչ է. այն ինչ, ինչպէս յայտնի է, միւս գաւառներում բաւարար չէ: Բայց մի և նոյնը չէ կարելի ասել պտուղների մասին Ղուբայում: Դրանք խիստ սակաւ են: Բացատրում են այդ հանգամանքը նրանով, որ մի տեսակ որդ, որը տեղական բարբառով «ղումղումայ» է կոչվում, նստում է ծառերի տերևների վրա, ուտում է ծաղիկները, կօկոնները և նոյն իսկ տերևներն է չորացնում: Այդեպանները յուսահատվել են. արդիւնքի միակ աղբիւրն էր այգեգործութիւնը: Պտուղների սակաւութեան պատճառները վերագրում են և այն հանգամանքին, որ մի շաբաթ առաջ սաստիկ տաք քամի բարձրացաւ, վնասելով ծառերին, որոնց վրայից ծաղիկները և կօկոնները թափվեցին»:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մայիսի 27-ին, Բագուի հայոց դերասանական խմբի անդամները քաղաքային ժողովարանի դահլիճում ներկայացրին Ա. Դիւմայի «Կամելիաազարդ տիկին» դրամայի, որը մեծ էսթետիկական զուարճութիւն պատճառեց հասարակութեանը: Խումբը դրանից առաջ էլ տուել էր մի շարք ներկայացումներ, սակայն և ոչ մինը այն ցանկալի տպաւորութիւնը չը թողեց հասարակութեան վրա, ինչպէս յիշեալ պիէսայի ներկայացումը: Այդ օրը պ. Ստեփանեանի բենեֆիսն էր և թատրոնը լի էր: Խումբը սկզբից մինչև վերջը լաւ տարաւ ներկայացումը: Մանաւանդ իր խաղով աւելի աչքի էր ընկնում օր. Վարդիթեր՝ Մարգարիտ Գոտիէի պատասխանատու դերում: Մնացած դերակատարներից իրանց խաղով աչքի էին ընկնում պ. Ստեփանեան՝ երիտասարդ Արմանի հօր՝ Դիւվալի դերում և պ. Ալիխանեան՝ Մարգարիտ Գոտիէի ամուսին բարօն դը Վարվիլի դերում: Հասարակութիւնը շատ գոհ մնաց ներկայացումից: Խումբը մտադիր է մի երկու ներկայացում ևս տալ և ապա ճանապարհվել դէպի Ալէքսանդրօպոլ»:

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Մայիսի 20-ին Սէիդլի գիւղի անտառում Միւշկիւրի պրիստաւ Հասան-բէկով պատահում է Միրիմի աւազակային խմբին: Երկու կողմից էլ հրացանաձգութիւն

որ շատ հաստ մարդ էր, նիզակի վերջը ստացաւ փորի կողմից: Նա մի ձեռքով բարձրացրեց իր թուրը, միւսով բռնեց թշնամու նիզակը, աւելի խոր մխեց ծայրը իր մարմնի մէջ և այդպիսով կարողացաւ հասցնել թուրը իր սպանողին, որի հետ միասին և գլորվեց գետնին:

Ամեն ինչ վերջացած էր: Ցաճիկները յաղթող դուրս եկան: Մօլդավիան մաքրված էր: Մօտ վեց հարիւր արնաւոտ ցրվեցին Բեսսարաբիայի զանազան կողմերը: Նրանք չը գիտէին, թէ ինչպէս պէտք է գլուխները պահեն, բայց էլի շնորհակալ էին Ռուսաստանից նրա հովանաւորութեան համար: Նրանք պարապ կեանք էին վարում, բայց ոչ անառակ: Նրանց կարելի է միշտ տեսնել կիսատաճկական Բեսսարաբիայի սրճարաններում՝ երկայն չիբուխները բերաններին՝ փոքրիկ գաւաթներից թանձր սուրճը ծծելիս: Նրանց նաշխուն բաճկոնները և կարմիր սրածայր մաշիկները արդէն սկսել էին մաշվել, բայց ցցունաւոր թասակները այնուամենայնիւ էլի թեք էին դրած և եաթաղաններն ու ատրճանակները առաջվայ պէս խրված էին լայն գոտիկների մէջ: Ոչ ոք նրանցից չէր գանգատվում: Կարծել անգամ չէր կարելի, թէ այդ խեղճ ու խաղաղ մարդիկ Մօլդավիայի ամենայայտնի կլէֆտներն են, ահռելի Կիրջալու ընկերները, և թէ նա ինքը նրանց մէջն է գտնվում:

Եասայում նստող փաշան իմացաւ այդ և դաշնագիրների հիման վրա պահանջեց ռուս իշխանութիւնից յանձնել իրանց այդ աւազակին:

Ոստիկանութիւնը սկսեց փնտռել: Իմացան, որ իրաւ Կիրջալին Քիշնևումն է: Նրան բռնեցին մի փախստական աբեղայի տանը երեկոյեան, երբ նա մթնում նստած ընթրում էր իր եօթ ընկերների հետ:

Կիրջալուն կալանաւորեցին: Նա ճշմարտութիւնը չը ծածկեց և խոստովանվեց, որ ինքն է Կիրջալին:

—Բայց, աւելացրեց նա, այն օրից, երբ ես անցայ Պրուտի այս երեսը, ոչ ոքից մի չօփ իսկ չեմ խլել, վերջին բօշային անգամ ձեռք չեմ տուել: Ցաճիկների, մօլդավների, վալախների համար ես ի հարկէ աւազակ եմ, բայց ռուսների համար ես հիւր եմ: Երբ Սաֆիանօսը, կարտէչը հատնելուց յետոյ, եկաւ կարանտին վիրաւորներից կոճակներ, մեխեր, ժամացոյցի շղթաներ ու եաթաղանի կոթեր հաւաքելու վերջին անգամ զէնքերը լցնելու համար, ես տուեցի նրան քսան բէշլիք և մնացի առանց փողի: Վկայ է Աստուած, որ այստեղ ես, Կիրջալիս, ողորմութեամբ էի ապրում: Ինչի համար են այժմ ռուսները մատնում ինձ թշնամիներիս ձեռքը:

Այդ խօսքերից յետոյ Կիրջալին լռեց և սկսեց հանգիստ սպասել իր վիճակի որոշման:

Երկար չը սպասեց նա: Իշխանութիւնը, պարտական չը լինելով նայել աւազակների վրա նրանց բօմանտիկական կողմից և հաժոզված լինելով, որ փաշայի պահանջը իրաւացի է, հրամայեց ուղարկել Կիրջալուն Եասսա:

Մի խելքի և սրտի տէր մարդ, անյայտ երիտասարդ աստիճանաւոր այն միջոցին, իսկ այժմ կարևոր պաշտօնի հասած, կենդանի գոյներով նկարագրում էր ինձ նրա հրաժեշտը:

Բանտի դռանը կանգնած էր մի պօստային կարուցա... Գուցէ դուք չը գիտէք, թէ ինչ է կարուցան: Այդ մի ցածիկ, գործած սայլակ է, որին դեռ վերջին ժամանակներս սովորաբար լծում էին վեց կամ ութ սատկած ձի: Բեխաւոր ու փափախաւոր մի մօլդավ, հեծած նրանցից մէկը, շարունակ գոռգոռում էր ու շեպում մտրակը, և նրա սատկած ձիերը վազում էին բաւական արագ քայլերով: Եթէ նրանցից մէկը սկսում էր մնալ, նա արձակում էր խեղճին սարսափելի հայհոյանքներ թափելով գլխին և թողնում էր ճանապարհին, ամենևին հոգս չը տանելով նրա վիճակի մասին: Նա հաւատացած էր, որ յետ դառնալիս կը գտնի իր ձին նոյն տեղում՝ հանգիստ արածելիս կանաչ արօտում: Շատ անգամ պատահում էր, որ մի կայարանից ութ ձիով դուրս եկած ճանապարհորդը հասնում էր միւս կայարանը մի զոյգով միայն: Այդպէս էր 10—15 տարի սրանից առաջ *): Այժմ ռուսացած Բեսսարաբիայում ընդունված է ռուսական սայլակը և ռուսական լծասարքը:

*) Այս պատմուածքը գրված է 1834 թվին:

Այդպիսի մի կարուցա էր կանգնած բանտի դռանը 1821 թվին, սեպտեմբեր ամսի վերջին օրերից մէկում: Հրէուտիներ՝ թեները քաշ գցած ու չուստերը քսքստացնելով, արնաւուներ՝ իրանց զգզված և գեղանկար հագուստով, գեղահասակ մօլդավուհիներ սևաչեայ մանուկները գրկերին՝ շրջապատել էին փարուցան: Տղամարդիկ լուռ էին, կանայք անհամբեր սպասում էին մի բանի:

Դարպասը բացվեց և մի քանի ոստիկանական սպաներ դուրս եկան փողոցը. նրանց յետևից երկու զինուոր դուրս բերեցին շղթայակապ Կիրջալուն:

Երեսուն տարեկանի տեսք ունէր: Թուխ դէմքի գծերը կանոնաւոր էին և դաժան: Բարձրահասակ էր, թիկնաւէտ, և առհասարակ արտասովոր ֆիզիկական ոյժ էր արտայայտում նրա կազմուածքը: Գոյնզգոյն փաթեթը թեք կերպով պատում էր գլուխը, լայն գոտիկը գրկել էր բարակ սէջքը. հաստ, կապոյտ մահուդից բաճկոնը, մինչև ծնկները հասնող չապկի լայն ծալքերը և սիրուն մաշիկները կազմում էին նրա հագուստի մնացած մասը: Կերպարանքը խրոխտ էր և հանդիստ:

Պաշտօնեաներից մէկը, մի կարմրադունչ ծերուկ՝ խունացած համազգեստով, որի վրա ճաճվում էին երեք հատ կոճակ, քիթը փոխարինող շառագոյն խոզակը պինդ թաքցնելով անագապատ ակնոցով, բաց արեց ձեռքի թուղթը և սկսեց

է սկսվում. Միրիմի ոտը վիրաւորվում է. իսկ պրիստաւի մարդկանցից սպանվում է մի գիւղացի։ Թողնելով Միրիմին անտառում, ընկերները փախչում են։ Միրիմին գտան մայիսի 27-ին Շիխ Գէլէնխուր գիւղի անտառում. ե-բէկ սայլով մեծ բազմութեամբ աւաղակապետին բերին քաղաք և բանտարկեցին։ Ցոյս կայ, որ միւսներն էլ բանտարկվեն։ Եռանդոտ միջոցներ են ձեռք առնված»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, մայիսի 15-ին

Ներկայումս ժամանակի պահանջների համաձայն առաջ գնալ և իւրացնել ժամանակի ոգին—նշանակում է համարձակ դիմել դէպի առաջադիմութիւնը։

Այժմ, երբ գիտական աշխարհը արդէն պաշտօնապէս հաստատում է դպրոցական հարցաքննութիւնների վնասակար լինելը թէ մանկավարժական և թէ առողջապահական տեսակէտից, ուրախալի է տեսնել, որ այդ նոր միտքը այսպէս շուտով արձագանք է գտնում մեզ մօտ։ Մի քանի դասախօսութիւններից ու բացատրութիւններից յետոյ, որով ձեռնտաս անձինք կարողացան պարզել և հասկացնել մեր հասարակութեան այդ նորութիւնը, ահա դուրս է գալիս Լիլաւայի դպրոցների վարչութեան պաշտօնական ազդը, որով ազդարարում է քննութիւնների իսպառ վերացվելը և հրաւիրում է հասարակութեանը հէնց օրական դասախօսութիւնների ժամանակ գնալ դպրոց և ներկայ գտնվել դասերին, իրանց երեխաների, սաների ուսումն ու ուսուցիչների ուսուցումը տեղն ու տեղը տեսնելու։

Այժմ մնում է մեզ տեսնել, թէ մեր հասարակութիւնը որքան համակրութիւն ցոյց կը տայ այս նշանաւոր երևոյթին։ Բայց ցանկալի էր, որ միանգամայն դաստիարակները աւելի ևս ուշք դարձնէին աշակերտների յոգնածութեան վրա, իսկ ծնողներն էլ բողոքովին համոզվէին, որ մանուկները չը պէտք է միշտ զբաղվեն և անդադար յոգնեցնեն ուղեղները։ Չը պէտք է անդադար լարել մանուկների ուշքն ու միտքը ի վնաս մարմնի, որպէս զի սա, մարմինը, վերջապէս չենթարկվի ծիւրման...։

Ցանկալի էր, որ մեր Ղալայի ուսումնարանական վարչութիւնն ու հասարակութիւնն էլ ուշք դարձնեն այս նշանաւոր երևոյթի վրա։ Չը նայած, որ մեր հասարակութիւնը ծիսակատարութեան միանգամայն և յանկարծակի վերացվելուն պիտի նայէ ոչ լաւ աչքով, բայց ինչ նշանակութիւն ունի այդ, երբ հարկն ու կարիքը պահանջում են մի բան, ուրեմն պէտք է անել...

Լիլաւայի ուսուչական խումբը պատրաստվում է մի ներկայացում տալ Հոգեգալստեան օրը նոյն թաղի դպրոցների օգտին. պիտի խաղան Գ. Սունդուկեանի «Քանդած օջախ» կոմէդիան։

Ատրպատականի Հայուհեաց ընկերութիւնը Ղալայում բաց է արել մի արհեստանոց—գործարան, նախ տեղացիների մէջ արհեստ տարածելու նպատակով և երկրորդ՝ գաղթական կանանց և աղամարդկանց գործ տալու համար. այդտեղ, գործարանում այժմ պատրաստում են միայն քաթանի գործուածքներ (բաւական ալջող), բայց նպատակ ունեն շուտով մահուդի գործուածքներ էլ պատրաստելու։ Գովելի է այս գործը, յամենայն դէպս աւելի օգտակար, քան Թաւրիզի Հայուհեաց ընկերութեան արհեստանոցում եղած գորգագործութիւնը, որ միանգամայն աւելորդ է մեզ, հայերիս համար։

Վաղվան համար Լիլաւայի Աբովեան ազգային գրադարան-ընթերցարանի վարչութիւնը ժողովի է հրաւիրել անդամներին անցած տարվայ հաշիւը ներկայացնելու և նոր վարչական անդամներ ընտրելու համար։ Առանց այդ հաշուի ընթերցանութեան ունկնդրած լինելու, մենք համարձակ կարող ենք ասել, որ վարչութիւնը կարողացել է բաւական աջողութեամբ վարել իրան յանձնված գործը և ամեն կերպ աշխատել է թէ ընթերցարանը բարեկարգելու և թէ ընթերցասիրութիւն տարածելու համար։ Մինչդեռ Ղալայի այնչափ հարուստ գրադարան-ընթերցարանը խիստ աննախանձելի վիճակի մէջ է այժմ... վարչութեան անուշադրութեան շնորհիւ։

Ա. Ց. Աման

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս յայտնի է, Զօլան վերադարձաւ Պարիզ։ Նա անյապաղ տեղեկացրեց այդ մասին ընդհանուր պրօկուրօրին և հաղորդեց նրան, որ Վէրսայլի դատարանի դատավճիռը կարելի է իրան յանձնել իր բնակարանում։ «Aurore» լրագիրը տպեց Զօլայի նամակը «Արդարութիւն» վերնագրով, որի մէջ նա բացատրում է, թէ հեռացաւ Ֆրանսիայից և համարեա 11 ամիսների ընթացքում մնաց աքսորում խորին լռութեան մէջ՝ սպասելով, որ ճշմարտութիւնը և արդարադատութիւնը պէտք է յաղթեն։ Երբ որ այդ սպասելիքները արդարացան, նա, Զօլան, վերածնվեց և վերադառնում է հայրենիք։ Նա աքսոր գնաց, զիջանելով անհրաժեշտութեան, ոչ թէ Ֆրանսիայից փախչելու, այլ ժամանակ վաստակելու համար, որպէս զի չը հանդչէր այն թոյլ լոյսը, որն օրից օր աւելի պայծառ էր դառնում։ Իր նամակը Զօլան վերջացնում է այսպէս. «Մենք ամբողջ ժամանակը կռւում էինք միայն արդարութեան յաղթանակի համար և պատրաստ ենք մեր կեանքը և ազատութիւնը զոհել դրա համար. մենք չէինք ցանկանում Վերսայլում խեղդված մնալ։ Պէտք էր սպասել Էստէրհազիի և Պիկարի դէմ սկսված քննութեան հետևանքին. արդեօք մենք արդար չէինք, երբ վճռեցինք սպասել ինչ գնով էլ լինէր։ Դա անհրաժեշտ էր այն պատճառով, որ հարցը անմեղի փրկութեան մասին էր...

—Սահմանադրութեան տարեդարձի տօնախմբութեան առիթով, Ուժբէրտօ թագաւորը հրովարտակ ստորագրեց, ներումն շնորհելով այն անձանց, որոնք բանտարկված են քաղաքական յանցանքների համար։ Ներումն չեն ստանայ դատաստանից փախած անձինք։

—Ըստ երևոյթին, տարածված այն լուրերը, թէ Բ. Դուռը ինտրիգներ է լարում Կրետէում նոր կառավարութեան դէմ, անհիմն չեն։ Այս օրերս հրաժարական տուեց նորերս նշանակված կառավարչական խորհրդի հինգ անդամներից մէկը, ժամէտական Հասան-բէյ Սկիլիանակի, որը որպէս մահմէտական, ներկայացուցիչ էր կրէտական խորհրդի մէջ մահմէտական շահերի և մահմէտական ազգաբնակութեան։ Հաւատացնում են, որ Հասան-բէյ հրաժարական է տուել՝ Կ. Պոլսից ուղղակի հրաման ընդունելով։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 յունիսի

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ։ Տեղական լրագիրները հաղորդում են, որ Նորին Մեծութիւնը ֆինլանդական սենատի 1896 թւի ամենահպատակօրէն հաշուից բարեհաճեց նկատել, որ երկրի ամբողջ ազգաբնակութեան 34% ամենևին ապահովված չէ հողով։ Հող չունեցողների այդպիսի անել դրութիւնը սրտին մօտ ընդունելով, Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամայեց յատկացնել երկու միլիոն մարկ, աստիճանաբար նրանց հող բաժանելու ֆոնդի համար։ Սենատին առաջարկված է առանձին յանձնաժողով կազմել և այդ գումարը ծախսելու համար առանձին կանոնադրութիւն մշակել։ Ներկայ Բարձրագոյն ողորմածութիւնը անհող գիւղացիների սրտերին կը պատճառէ անսահման ուրախութիւն և խորը զգացմունք դէպի Ռուսաստանի Ինքնակալը։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողով։ Մի քանի սոցիալիստ պատգամաւորներ գանգատվում են ոստիկանական գործակալների կոպտութեան վրա։ Կենտրոնը մի քանի անգամ պահանջեց, որ վիճաբանութիւնները վերջանան։ Երեք տեսակ առաջարկութիւններ են արված հերթական հարցերին անցնելու համար, ի միջի այլոց առաջարկված է Սօմադի բանաձևը, որի մէջ հաւանութիւն է յայտնված կառավարութեան յայտարարութիւններին։ Պատգամաւորներից մի քանիսը պահանջում են հերթական հարցերին հասարակ կերպով անցնելու բանաձևը, բայց Դիւպիւի մերժում է այդ և միանում է Սօմադի առաջարկութեանը։ (Սաստիկ յուզմունք)։ Հերթական հարցերին հասարակ կերպով անցնելու բանաձևը մերժվում է 326 ձայնով ընդդէմ 219-ի։ Ժողովը մերժում է ապա 376 ձայնով ընդդէմ 109-ի Վալեանի առաջարկութիւնը, որի մէջ շնորհաւորում է Պարիզի ժողովուրդին երէկվայ փառաւոր ցոյցի համար և դժգոհութիւն է յայտնում ոստիկանութեան։ Դիւպիւի յայտնում է, որ կը մերժէ նաև Դիւլօի բանաձևը, որը կազմված է այսպէս. «Պատգամաւորների ժողովը, հրաժարվելով միանալ ոստիկանութեան դէմ դժգոհութիւն յայտնելուն» և այլն։ Դիւլօի առաջարկութիւնը մերժվեց (346—158)։ (Սաստիկ յուզմունք)։ Երեք բանաձևեր ժողովում են Բրիսօ, Բանբերտի և Բրէն։ Դիւպիւի մերժում է բոլոր երեքն էլ և յայտնում է, որ ընդունում է Սօմադի առաջարկութիւնը։ Ժողովը սկսում է քուէարկել Բրիսօի բանաձևը, որը կազմված է այսպէս. «Պատգամաւորների ժողովը, ցանկանալով պաշտպանել միայն այնպիսի կառավարութիւն, որը պատրաստ կը լինի ե-ռանդով պաշտպանել հանրապետական հիմնարկութիւնները և ապահովացնել հասարակական կարգերը, անցնում է հերթական հարցերին»։ Առաջնութիւնը յօգուտ Բրիսօի բանաձևի ընդունվեց (366—177)։ Դիւպուի նորից յայտնում է, որ կարող է ընդունել միայն Սօմադի բանաձևը։ Բրիսօի բանաձևը ընդունվեց 321 ձայնի առաւելութեամբ 178-ի դէմ, Մինիստրները հեռանում են դահլիճից։ Սոցիալիստներն աղաղակում են «կեցցէ հանրապետութիւնը»։ Նիստը փակվեց։ Հետևեալ նիստը նշանակված է երկուշաբթի։

ՊԱՐԻԶ։ Նիստից յետոյ, 5½ ժամին, Դիւպիւի, իր ընկերների ուղեկցութեամբ, գնաց Ելիսեան պալատը՝ մինիստրութեան հրաժարականի հաւաքական խնդիրը ներկայացնելու համար հանրապետութեան նախագահին։ Նախագահն ընդունեց հրաժարականը և խնդրեց մինիստրներին մնալ իրանց պաշտօններում մինչև նրանց յաջորդների նշանակումը։

Տեսակցութիւնը Ելիսեան պալատում շատ կարճատև էր, նա շարունակվեց 5 րոպէ։ Պատգամաւորների ժողովի ձայնատուութիւնը խորը տպաւորութիւն գործեց Բուրբոնեան պալատի կօրիդօրներում, որովհետև ոչ ոք սկզբում չէր մտածում մինիստրութեան անկման մասին։ Սոցիալիստները շատ մեծ ուրախութիւն են յայտնում։

ՊԱՐԻԶ։ Լուբէի տեսակցութիւնը շատ ժողովական էր հրաժարական տուած մինիստրների հետ։ Լուբէ ջերմ կերպով շնորհակալութիւն յայտնեց աջակցութեան համար և ասաց, որ կը պահպանի ամենալաւ յիշողութիւններ նրանց մասին և նրանց ցոյց տուած ծառայութիւնների մասին։ Տեսակցութիւնը շատ լաւ տպաւորութիւն թողեց Դիւպիւիի և նրա ընկերների վրա։ Պատգամաւորների ժողովի կօրիդօրներում սկսում են մի առ մի թւել մինիստրներ—նախագահի պաշտօնի թեկնածուների անունները։ Անուանում են, ի միջի այլոց, Պուանկարէին, Վալդէկ-Ռուսօին, Դէլկասէին, Կրանցին, Դէլօմբրին, Գիլլէնին։ Խօսում են նոյնպէս Բրիսսօնի, Լանդէսանի, Դումէրքէի և ուրիշների մասին։ Աւելացնում են, թէ որովհետև մինիստրութիւնն ընկաւ ոչ թէ սկզբունքի հարցի պատճառով, որը հնարաւորութիւն կարող էր տալ մի որոշ գոյն ունեցող մինիստրութիւն կազմել, այդ պատճառով դժուար է հասկացողութիւն կազմել Դիւպիւիի կաբինէտը փոխարինող մինիստրութեան մասին։ Լուբէ միայն վաղը կը հրաւիրի սենատի և պատգամաւորների ժողովի նախագահներին՝ խորհրդակցելու համար քաղաքական դրութեան մասին։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովի այսօրվայ նիստի ժամանակ մէկը միւսի ետևից տեղի ունեցող քուէարկութիւնները ցոյց են տալիս, որ մեծամասնութեան մէջ քիչ-քիչ մասնակցում էին բոլոր կուսակցութիւնները։ Այդ մեծամասնութիւնը ակնյայտնի կերպով ղեկավարվում էր մի ցանկութեամբ, այն է ազատվել Դիւպիւիից։ Վալեանի հարցապնդումը միայն պատրուակ էր՝ ճգնաժամի իսկական պատճառը ծածկելու համար։ Սոցիալիստները և սոցիալ-արմատականները պախարակում են մինիստրութիւնը այն բանի համար, որ նա հակասական ընթացք էր բռնել Դրէյֆուսի գործում։ Ինչ վերաբերում է չափաւորներին, նրանք յոյս ունեն Մէլինի վերադարձի վրա։ Վերջապէս, ըէակցիօնէրները, հակասէմիտները և նացիոնալիստները ձայն տուին Դիւպիւիի դէմ այն յոյսով, որ նրա յաջորդ կը նշանակվի մի այնպիսի մարդ, որ աւելի յարմարաւոր կը լինի նրանց համար։ Մինիստրութիւնը պաշտպանող 172 պատգամաւորները պատկանում են, մեծ մասամբ, արմատական կուսակցութեան չափաւոր ֆրակցիային։

ՊԱՐԻԶ։ Դէլամբրի մօտ տեղի ունեցած երեկոյթին բազմաթիւ պատգամաւորներ յայտնեցին, թէ Դրէյֆուսի գործի վճիռը մեծ դեր խաղաց

ֆոֆսացնելով կարդալ մի ինչ որ մօլդավերէն բան։ Երբեմն-երբեմն նա զոռոզաբար նայում էր չղթայակապ Կիրջալուն, որին էր վերաբերում, ըստ երևոյթին, թուղթը։ Կիրջալին ուշադրութեամբ ականջ էր դնում։ Պաշտօնեան վերջացրեց ինչ որ կարդալու էր, ծալեց թուղթը, խրոխտաբար գոռաց ամբոխի վրա, հրամայեց նրան յետ քաշվել և պատուիրեց մօտենալ կարուցան։ Այն ժամանակ Կիրջալին դիմեց նրան և մի քանի խօսք ասեց մօլդավերէն. նրա ձայնը դողում էր, դէմքը այլայլվեց. նա լաց եղաւ և ընկաւ ոստիկանի ոտները, դղրդացնելով իր չղթաները։ Ոստիկանը վախից յետ ցատկեց, զինուորները ուզում էին Կիրջալուն բարձրացնել դետնից, բայց նա ինքը վեր կացաւ, հաւաքեց իր չղթաները, ոտը դցեց սայլակը և գոռաց՝ հայդա։ Ժանդարմը նստեց կողքին. մօլդավը շեպեց մտրակը և սայլակը շարժվեց տեղից։

—Այն ինչ էր ասում ձեզ Կիրջալին, հարցրեց երիտասարդ աստիճանաւորը ոստիկանից։

—Ինչ պէտք է ասէր, պատասխանեց ծիծաղելով ոստիկանը, խնդրում էր, որ հոգս տանեմ կնոջ և երեխայի վրա, որոնք ապրում են Կիլիից ոչ հեռու մի բուլղար գիւղում. վախենում է՝ նրանք էլ իր պատճառով վնասվեն։ Ցիմար մարդիկ են էլէ։

Երիտասարդ աստիճանաւորի պատմածը ինձ սաստիկ յուզեց։ Մեղքս գալիս էր խեղճ Կիրջալին...

Երկար ժամանակ ոչինչ չը գիտէի նրա մասին։ Մի քանի տարի անցած միայն ես նորից պատահեցի երիտասարդ աստիճանաւորի հետ։ Սկսեցինք խօսել անցեալի մասին։

—Ի՞նչպէս է ձեր բարեկամ Կիրջալին, հարցրի ես, չը գիտէք՝ ինչ եղաւ նա։

—Ինչպէս չեմ իմանում, պատասխանեց նա և պատմեց ինձ հետևեալը։

Երբ Կիրջալուն Եասա տանելով ներկայացրել էին փաշային, վերջինը վճռել էր ցցի հանել նրան։ Պատիժը յետաձգել էին մինչև մի ինչ-որ տօն։ Մինչ այդ նրան դցել էին բանտը։

Կալանաւորի վրա հսկում էին եօթ տաճիկներ (պարզ մարդիկ և ներքուստ նոյնպէս աւազակ, ինչպէս և Կիրջալին)։ Նրանք յարգում էին նրան և ամբողջ արևելքին յատուկ ազնուութեամբ լսում էին նրա հրաշալի պատմութիւնները։ Պահապանների և կալանաւորի մէջ սերտ կապ հաստատվեց։ Մի անգամ Կիրջալին ասաց նրանց։

—Տղայք, մահս մօտ է։ Ոչ ոք իր ճակատագրից չէ կարող ազատվել։ Շուտով ես պէտք է բաժանվեմ ձեզանից։ Կուզէի մի բան թողնել ձեզ յիշատակ։

Տաճիկները ականջները կախեցին։

—Տղայք, շարունակեց Կիրջալին, երեք տարի առաջ, երբ ես աւազակութիւն էի անում հանգուցեալ Միխայլակիի հետ, Եասայի մօտ դաշտում մի պղինձ լիքը ոսկի թաղեցինք։ Ինչպէս տեսնում եմ ոչ ինձ էր վիճակված այդ գանձը հանել, ոչ նրան։ Ի՞նչ արած, առէք ձեզ ու ընկերաբար բաժանեցէք մէջներդ։

Տաճիկները քիչ էր մնում գժվէին։ Սկսեցին խօսել, թէ ինչպէս պէտք է գտնեն այդ բաղձալի տեղը։ Մտածեցին, մտածեցին և վերջը վճռեցին, որ ինքը Կիրջալին տանի իրանց ցոյց տայ։

Մութն ընկաւ։ Տաճիկները չղթաները հանեցին կալանաւորի ոտներից, պարանով կապեցին ձեռները և նրա հետ միասին դուրս եկան քաղաքից դաշտը։

Կիրջալին տանում էր նրանց, միշտ միևնոյն ուղղութեամբ, մի բլրից միւսը։ Վերջապէս Կիրջալին կանգ առաւ մի սալ քարի մօտ, չափեց տասներկու քայլ դէպի հարաւ, ոտը խփեց գետին և ասաց՝ այստեղ է։

Տաճիկները կարգադրութիւնն արեցին։ Զօրսը հանեցին եաթաղանները և սկսեցին փորել գետինը։ Երեքը մնացին իրրև պահապան։ Կիրջալին նստեց քարի վրա և սկսեց նայել նրանց աշխատանքին։

—Հը՞, շուտ կը վերջացնէք, հարցնում էր նա. չը հասա՞ք։

—Դեռ չէ, պատասխանում էին տաճիկները, և այնպէս էին աշխատում, որ քրտինքը առուի պէս թափվում էր երեսներից։

Կիրջալին սկսեց անհամբերութիւն ցոյց տալ։

—Դուք էլ պէտք է ասէք, թէ տղամարդիկ էք էլէ, ասում էր նա. գետին փորել էլ կարգին չէք կարողանում։ Ա՛յ գիտի՞ մ՚, երկու րոպէում կը վերջացնէի։ Տղայք, ձեռներս բաց արէք, մի եաթաղան տուէք ինձ։

Տաճիկները սկսեցին մտածել ու խորհուրդ անել։ Ի՞նչ կայ որ, (վճռեցին նրանք) եկէք արձակենք ձեռները ու մի եաթաղան տանք իրան։ Ի՞նչ պիտի լինի։ Նա մի մարդ է, մենք՝ եօթ։ Եւ տաճիկները արձակեցին նրա ձեռները։

Վերջապէս Կիրջալին ազատ էր և զինված։ Ո՞վ կարող է ասել, թէ ինչ էր զգում նա... Նա սկսեց արագ-արագ փորել, պահապաններն էլ օգնում էին նրան... Ցանկարծ նա նրանցից մէկի կուրծքը մխեց եաթաղանը, և պողպատը այնտեղ թողնելով, խլեց նրա գօտկից ատրճանակները։

Մնացած վեցը, տեսնելով Կիրջալու ձեռքին երկու ատրճանակ, փախան։

Կիրջալին այժմ աւազակութիւն է անում Եասայի մօտերքը։ Վերջերս նա նամակ էր գրել իշխանին, պահանջելով նրանից հինգ հազար ոսկի և սպառնալով այրել Եասան ու գերել իրան՝ իշխանին, եթէ ժամանակին չը տայ պահանջած փողը։ Հինգ հազար ոսկին ստացաւ։

Ո՞նց է մեր Կիրջալին։

Տ. Յովհաննիսեան

Դիլպիւրի մինիստրութեան անկման մէջ։ Բոլոր սոցիալիստները և արմատականներից շատերը պահանջում են, որպէս զի պատժի ենթարկվեն նաև Բուադէֆր ու Մերսիէ գեներալները։ Կարծում են, որ Դիլպիւրի չէր անի այդ քայլը։ Այդ պատճառով նրանք օգուտ քաղեցին Վալիանիի հարցապնդումից՝ ոստիկանութեան վարմունքի մասին, որպէս զի իրանց անվստահութիւնը յայտնեն մինիստրութեան։ Այնու ամենայնիւ, Դրէյֆուսի գործին վերջ տալը ներկայանում է իբրև ամենամեծ արգելք ճգնաժամի լուծման։

ՊԱՐԻԶ։ Մի քանի լրագիրների խմբագրատներում լուրեր են պտտում Նիցցայում Օրլէանեան դքսի ձերբակալութեան մասին։ Չը նայելով հաւաքած տեղեկութիւններին, մինչև այժմ չէ աջողվում իմանալ, թէ ինչից է առաջացել այդ լուրը և որքան նա ճիշդ է։

ՊԱՐԻԶ։ Նիցցայից ստացվեց տեղեկութիւն, որ հաստատում է այն լուրը, թէ այնտեղ մի ձերբակալութիւն է կատարվել։

ՊԱՐԻԶ։ Նիցցայից հեռագրում են, որ լուրերին նայելով, այնտեղ ձերբակալվեց իտալական մի գեներալ, ծագումով Նիցցացի, մեղադրվելով լրտեսութեան համար Նիցցայում, ուր նա արձակուրդով գտնվում էր մի քանի օր։

ՄԱԴՐԻԴ։ Սենատ։ Ալմէնաս վերսկսեց իր յարձակումները գեներալների դէմ։ Գործը հասնում է ընդհարման Պրիմա-Ռիվէրի հետ, որը նրան լիրբ է անուանում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր տեղի ունեցաւ «Petersburger Zeitung» լրագրի հրատարակիչ Պավել Կոնստանտինովիչ Ֆօն-Կիւդէլզէնի 25-ամեայ յօբելեանը։ Նրան համակրողները հաւաքվեցին 4 ժամին Պետրոպավլովսկայա դպրոցի դահլիճում, ուր յօբելեարին մատուցվեցին ուղերձներ լութերական եկեղեցիների խորհուրդներից, աւետարանական հիւանդանոցներից, գերմանական կօլօնիայից, գերմանական լրագիրներից, Ռիգա քաղաքից, Կուրլանդեան բարօնութիւնից և Իւրիեվի համալսարանի կօրպօրացիայից, ուր յօբելեարը աւարտել է իր ուսումը։ Գերմանական կլուբում ի պատիւ յօբելեարի աւղի ունեցաւ ճաշ 200 հոգու համար, ուր բազմաթիւ ճառեր խօսվեցին։

ՋԻՍՏՕՊՕԼ։ Այսօր բերված է այստեղ զէմստվոի համար 100 հազար պուդ հաճար։

ՄՕՍԿՎԱ։ Սիբիրի գծի վրա այսօր, առաւօտեան ժամի 7-ին, 126 վերստի վրա, խորտակվեց № 21 ապրանքատար գնացքը։ Փչրված են 15 վագոն։ Ծանր վիրաւորված է աւագ կօնդուկտորը, աւելի թեթև կերպով կօնդուկտորը և ձէթ քսողը։ Պատճառը յայտնի չէ։

ԿԱԶԱՆ։ Վերջացան քննութիւնները քննողական յանձնաժողովներում։ Պատմական-լեզուագիտական բաժնում քննութիւն բռնեցին 6, իրաւաբանական բաժնում. առաջին կարգի—14, երկրորդ—25, ֆիզիկո-մաթէմատիկական բաժնում բնագէտներ 1 կարգի—17, 2—4, մաթէմատիկոսներ 3 առաջին կարգի։

ՊԱՐԻԶ։ Օրլէանեան դքսի ձերբակալումը Նիցցայում պաշտօնապէս հերքվում է։ Նիցցայում ձերբակալված է իտալական գեներալ Զիլիեատա։ Նա ձերբակալվեց երէկ, իտալական սահմանի մօտ, հէնց այն միջոցին, երբ նա գնում էր ֆրանսիական պաշտպանողական բերդերը։ Նրա մօտ գտան ֆրանսիական զանազան յատակագծեր։ Այդ գեներալը, որը ունի ծովային Ալպերում իր սեպհական ամարանոցը, մի քանի ժամանակ է արդէն որ հսկողութեան տակ էր գտնվում։ Նա հաւատացնում է, որ լրտեսութիւնով չէ պարապում, այլ զբօսանք էր կատարում իբրև տուրիստ։ Նրա ասելով, նրա մօտ գտնված յատակագծերը ոչ մի գաղտնի նշանակութիւն չունեն։

ՊԱՐԻԶ։ Բոլոր լրագիրները խիստ լեզուով դատապարտում են Դիլպիւրին, ապացուցանելով, որ երբուն քաղաքականութեամբ նա աշխատում էր հասնել այն բանին, որ, ինչպէս ասում է առածը, համ ոչխարները ողջ մնան, համ գայլերը կուշտ։ Նա դաւաճանում էր բոլոր կուսակցութիւններին, դժգոհութիւն յարուցեց բոլորի մէջ։ Ամենքը համաձայն են միմեանց հետ այն բանում, որ Լօնշանում տեղի ունեցած անցքը Դիլպիւրի համար փորձաքար էր։ Սոցիալիստները իրանց են վերագրում այդ գործի պատիւը։ Արմատական և հանրապետական լրագիրների ժեծամասնութիւնը նախագուշակում է, որ ճգնաժամը կարճատև կը լինի։ Պահպանողականները կարծում են, որ նա երկարատև կը լինի, և թէ Լուբէի գործը դժուար է, եթէ նա առաջուց չէ պատրաստել մինիստրութիւն։ Մի քանի օրդաններ որպէս ապագայ մինիստր-նախագահներ անուանում են՝ Կոնստանին, Բուվիէին, Պուանկարէին, Վալդէկ-Բուսսին և Բուրժուային։ Ուրիշները անուանում են՝ Բրիսսոնին, Սարիէնին, Տրարիէին։ «Matin» հաւատացնում է, որ Դէլկասէ արտաքին գործերի մինիստր կը մնայ։

«Echo de Paris» լրագրում Բօրեպէր յայտարարում է, որ շուտով Դրէյֆուսի յանցաւորութեան ապացոյցներ կը ներկայացնի և կը հրատարակի նրանց «Echo de Paris» լրագրում։

ՊԱՐԻԶ։ Կրիստիանի դատապարտվեց 4 տարվայ քանտարկութեան։

ՊԱՐԻԶ։ Սենատի և պատգամաւորների ժողովի նախագահների հետ տեսակցութեան ժամանակ Լուբէ ցանկութիւն յայտնեց, որ ճգնաժամը շուտով վերջանայ։ Կարծում են, որ դեռ այսօր նախագահը կը կանչի Պուանկարէին՝ մինիստրութեան կազմակերպութիւնը նրան յանձնելու համար։

ԹՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ԲԱԹՈՒՄ, Ս. Բաղդասարեան. Դժբախտաբար, անկարող ենք օգտվել ձեր ուղարկած նամակներից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

☛ Մայիսի 16-ից, 14 տարեկան եղբայրս՝ Արտաշէս Զալաբեանց (Նոր-Բայազէտցի) ծածուկ կերպով անհետացել է. որքան որոնեցինք, հարց ու փորձ արեցինք, ոչ մի տեղից, ոչ մի լուր չառինք։ Այժմ խնդրում եմ այն անձանց, որոնց կը յայտնվի այս անուան և հասակի տղայ, օգնեն ինձ, տեղը գտնելու։ Հասցէս. Тифлисъ, Солдатскій базаръ, д. церковный, № 6.
1—1 Արքել Զալաբեանց

ԹԻՒՐՔԱՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՊՈԼԻՏՈՍ
ԷՍԱԳ-ԲԷՅ ՄՈՒՖՏԻ ԶԱԴԷ
ստանալով արձակուրդ՝ գնաց Կ. Պօլիս։ Նրա տեղ նշանակված է ՆԱՓԻԼԵԱՆ ԷՖԷՆԴԻՆ, որը արդէն ստանձնեց իր պարտաւորութիւնը։
3—3

ՄԻ ԽՄԲԱՊԵՏ
անցած լինելով պ. Եկմալեանի մօտ խմբապետի կուրս և հմուտ եկեղեցական արարողութիւններին՝ ցանկանում է հայոց եկեղեցիներում տեղ ունենալ։ Դիմել՝ Վլադիկաւկազ, Գէորգ Ղուլիջանեանին։
5—5

Պետական բանկի Թիֆլիսի բաժինը, յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը փակ կը լինի հասարակութեան համար, ցերեկվայ ժամը 2-ից։
3—3

Խ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ
ընդունում է մասնաւոր դասեր խմբապետական կուրսերի։
Հասցէն գրաւոր. Тифлисъ, Вокзалъ, Кара-Мурза.
2—2

ԲԺԻԶԿ ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Մոսկվայից)
Նախընթաց տարիների պէս կընդունէ հիւանդներին Կովկասի հանքային ջրերում—Պեատիգօրսկում, մայիսի 8-ից։
(Հ. չ.) 6—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Ստեփան Բարսեղեան
ՏԷՐ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑ
(Բաքուից)
նախկին 6 տարիների պէս, այս տարի էլ ամառվայ ամիսները պարապելու է բժշկութեամբ Ժէլէզնովոդսկում, Բելեավսկու ամարանոցում։
3—3

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ
Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը։
Գանօվսկայա փողոց, տուն Մարգարովի, № 31։
(Ե. Հ. չ.) 36—100

ՄԻ ՀԱՅՈՒԱՊԱՀ
տեղ է որոնում։ Ցանկացողները թող դիմեն՝ Սիօնի փողոց, Տէր-Յակովբեանի խանութում։
(Ե. Հ.) 1—2

Թիֆլիսի Վաճառականների Աւագը եւ ընկերները

խնդրում են Թիֆլիսի 1 և 2 կարգի պ.պ. վաճառականներին չնորհ բերել ԸՆԴՀԱՆՈՒ ԺՈՂՈՎԻ (մայիսի 23-ին չը կայացածի փոխարէն) Թիֆլիսի առևտրական ուսումնարանի համար նախագահ և հոգաբարձութեան անդամներ ընտրելու համար, կիրակի, յունիսի 6-ին, առաւօտեան ժամի 11½-ին։ Ժողովը տեղի կունենայ Թիֆլիսի ժողովարանի ձմերային բնակարանի դահլիճում։ 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

յայտնում է ընկերութեան պ.պ. անդամներին, որ առաջիկայ յունիսի 6-ին, երեկոյեան ժամը 7-ին, կիրակի օրը, Թիֆլիսի Դումայի դահլիճում տեղի կունենայ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, որի պարապմունքի խնդիրները կը լինեն—1) քննութիւն և հաստատութիւն հաշիւների, կենտրօնի՝ 1898 թուի և ճիւղերի՝ 1896, 1897 և 1898 թ. թ., 2) քննութիւն Ախալցխայի Վարչութեան յարուցած հարցի Ընկերութեանս անձեռնմխելի ֆօնդի մասին, 3) զեկուցումն Կաղզվանի ճիւղի խափանման մասին, 4) զեկուցումն Ընկերութեանս յատուկ դուժարների մասին, 5) զեկուցումն կենտրօնի գրադարանի մասին, 6) վերաշինութիւն Խուդադեանի քարվանսարայի, 7) Ընկերութեան Վաղարշապատի Վարչութեան և անդամ Մ. Զմշկեանի առաջարկութիւնները բժշկապետ Բագրատ Նաւասարդեանին Ընկերութեանս պատուաւոր անդամ ընտրելու մասին և 8) Մ. Զմշկեանի առաջարկութիւնը մի որքանոցի կամ մի մատուռի հիմնարկութեամբ յաւերժացնելու Ընկերութեանս յիշատակը։

Խորհրդի 1898 թ. տեղեկագիրը տպագրված կարող են ստանալ Ընկերութեան անդամները յունիսի 4-ին, 5-ին և 6-ին Խորհրդի գրասենեակից—Անկիւն Միջին-փողոցի և Երևանեան հրապարակի, նախկին տուն գեներալ Տէր-Աստուրովի։ (Հ. հ. ո.) 2—3

ԱԿՈՒՄԲ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՑ
„ՀԱՄԱԼՍԱՐԱՆ“
ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Փարիզի Հայ Ուսանողաց Ակումբը, իբրև գլխաւոր նպատակ ունենալով, Հայ ժողովրդին մէջ տարածել գիտութիւնը, պիտի հրատարակէ «Համալսարան» անունով Ամսաթերթ մը, յառաջիկայ յուլիս ամսէն սկսած։

«Համալսարան» պիտի խօսի այն ամէն գրական և գիտական նիւթերու վրայ, որ հայ ժողովուրդի բոլոր դասակարգերուն,—ուսանողին և գործաւորին, վաճառականին և արհեստաւորին,—ամիսի ծանօթութիւնները պիտի տան՝ պարզ և հասկանալի ոճով, իբրևց վիճակի և հանգամանքներուն համաձայն։

«Համալսարան» մասնաւոր ուշադրութիւն պիտի դարձնէ ընտանեկան և քիմիական վրայ. ու փոխանակ վերացական տեսութիւններու՝ պիտի պարզէ անոնց գործնականապէս կիրարկութիւնները, դիւրին միջոցներով։

«Համալսարան» միևնոյն ճամբուն պիտի հետևի նաև մնացած բոլոր գիտութիւններու մէջ, ինչպէս՝ կենդանաբանութիւն, բժշկութիւն, երկրագործութիւն, և այլն։

«Համալսարան» պիտի ունենայ բաժին մը գիտական (ընական և ուսանողական) դասընթացքներու, մասնաւորապէս նպաստելու համար հայ դպրոցականներու մասնաւորապէս ստիպնաւոր զարգացման։

«Համալսարան» մեծ ոյժ պիտի տայ գրականութեան—պատմական, լեզուաբանական, խմբասասիրական, բանաստեղծական դրուածքներ և վիպակներ պիտի երևին հոն, իբրևց կարգին։

«Համալսարան» լայն հշեր պիտի յատկացնէ մանկավարժութեան, համեմատութեան դնելով զանազան մեթոտներ և ուղղութիւններ։

«Համալսարան» պիտի ջանայ առատ նիւթ հայթհայթել ինքնազարգացումով և մասնագիտութիւնով պարապողներուն։

«Համալսարան» տեղեկութիւններ պիտի տայ եւրոպական կրթական հաստատութիւններու վրայ, որպէս զի Եւրոպա մեկնող հայ ուսանողները նախապէս ծանօթանան իրենց ընտրած վարժարաններու ուղղութեան և հոն մտնել կարենալու միջոցներուն։

«Համալսարան» ամիսի քննադատութիւններ պիտի ընէ՝ իբրև ղրկած հայերէն հրատարակութիւններու վրայ։

«Համալսարան» երբեք չը պիտի զբաղի քաղաքական, կուսակցական և առհասարակ այդ կարգի պատկանող խնդիրներով։

«Համալսարան» մէկ խօսքով, պիտի ըլլայ հայ տարրին «Համալսարանը»։

«Համալսարանի» բաժանորդագրութիւնը բացված է։ Տարեկան բաժնեգինն է, 12 թիւի համար, իւրաքանչիւրը 32 էջ, տասն ֆրանք ամեն երկրի համար։—Անյապաղ ստանալ փափաքողները, թերթին հրատարակված օրէն իսկ, դիմելու են, Rédaction du «Hamalsaran» 125, Boulevard St. Michel, 125 PARIS. 1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 9/21 յունիսի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են առաջին դասակարգի գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Դ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի և Մայտուրաձէ քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլղարեանին Կօլուբիակինսկայա հրապարակ։ ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենզօնին։
(Ե. Հ. չ.) 20—20



ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ
ԳԱԶՕ-ՇՈԳԻԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրօտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆօնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ
Ինժեներ Ն. Բ. Պասսէկի
Тифлисъ, Михайловская ул. № 116.
Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.
ՏԷԼԷՖՕՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԻԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
տիւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տնակներ։

ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. Հ.) 7—100

Дозволено цензурою, Тифлисъ, 2 Іюня 1899 г.

Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбеліановская ул., № 27.